ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.03.2012թ.
163-ի 2

Նոր Հաճնի քաղաքապետ
պարոն Գագիկ Մաթևոսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մաթևոսյան,

21.02.2012թ.-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էինք Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր քաղաքի բյուջեով 2011 եւ 2012 թվականների համար ինչքա՞ն գումար է նախատեսվել ձյան մաքրման աշխատանքների համար:
2. 2011թ. ինչքա՞ն գումար է հատկացվել Նոր Հաճն քաղաքի ձյան մաքրման աշխատանքների համար:
3. 2012թ. փետրվարի 20-ի դրությամբ ինչքա՞ն գումար է հատկացվել Նոր Հաճնի ձյան մաքրման աշխատանքների համար:

Նոր Հաճնի քաղաքապետարանից ստացված պատասխան գրությամբ, սակայն, տրամադրված էր միայն ձյան մաքրման աշխատանքների համար հատկացված (ծախսված) գումարների մասին տեղեկություն, իսկ բյուջեով նախատեսված գումարների մասին տեղեկությունը բացակայում էր:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք հայտնել, թե Ձեր քաղաքի բյուջեով 2011 եւ 2012 թվականների համար ինչքա՞ն գումար է նախատեսվել ձյան մաքրման աշխատանքների համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան